

«Թումանյանը մեր աչքերով»

2019 թվականը կարևորվում է մի շարք կարևոր հոբելյաններով: Նշում ենք մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի 150-ամյակները, Սիլվա Կապուտիկյանի 100-ամյակը, Պարույր Սևակի 95-ամյակը և այլն:

Հայաստանի ազգային գրադարանը, ինչպես մի շարք այլ մշակութային օջախներ, անմասն չմնաց նախատեսվող միջոցառումներից:

Փետրվարի 20-ին Հայաստանի ազգային գրադարանում թումանյանական մթնոլորտ էր տիրում: Գրադարանում էին անվանի լոռեցիներ «Արվեստագետ» կրթամշակութային ՀԿ-ի խորհրդի նախագահ Իվան Անտոնյանը, խորհրդի անդամներ, ՀՀ վաստակավոր արտիստ, Վանաձորի «Հորովել» երգի-պարի անսամբլի վաստակավոր մենակատար Ստեփան Դալլաքյանը, Պոեզիայի թատրոնի հիմնադիր, «Մովսես Խորենացու» մեդալակիր Ջիվան Սարգսյանը: Միջոցառման պատվավոր հյուրերն էին ՄԳԱ ակադեմիկոս, անվանի լեզվաբան «Արվեստագետ» կրթամշակութային ՀԿ-ի խորհրդի անդամ Լավրենտի Միրզոյանը, և ՀՀ Վետերանների միության նախագահ, գնդապետ, վաստակավոր ասմունքող Սիմոն Եսայանը:

Միջոցառմանը ներկա էր նաև ՀՌԴ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ժողովրդական նկարիչ «Արվեստագետ» կրթամշակութային ՀԿ-ի խորհրդի անդամ Հրանտ Թադևոսյանը: Ներկայացնելով Թաթոսին՝ միջոցառման բանախոս Իվան Անտոնյանը տեղեկացրեց, որ ամիսներ առաջ «Արվեստագետ» կրթամշակութային հասարակական կազմակերպության միջնորդությամբ մեծ արվեստագետ Հրանտ Թադևոսյանի «Ներիր ինձ, Գիքոր» կտավը մեկնարկեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը և այն նվիրաբերեց Դսեղի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանին:

Ամենայն հայոց բանաստեղծի մասին խոսեց և «Ախ ինչ լավ են սարի վրա» երգը կատարեց ՀՀ վաստակավոր արտիստ Ստեփան Դալլաքյանը: Թումանյանի բանաստեղծություններից և քառյակներից կարդաց Ջիվան Սարգսյանը: Ներկաները առանձնակի ջերմությամբ լսեցին «Գիքորը» ֆիլմի գլխավոր հերոս, Գիքորի դերակատար Ալբերտ Ղուլինյանի հուշերը՝ կապված ֆիլմի նկարահանման հետ.

«Ամենադժվար տեսարանը, որ նկարահանվեց, դա Բազազ Արտեմի ապտակի պահն էր,- ասաց Ղուլինյանը,- մի անգամ ինձ կանչեց իր մոտ Հենրիկ Մայանը և մի մեծ խնձոր տվեց ու ասաց,- տղաս, որ դու խնդրես Ջիգարխանյանին, նա քեզ չի մերժի, կապտակի,- և այդպես էլ եղավ, միայն թե խնդրել էի մյուս այտիս ապտակեր, քանի որ ատամս ցավում էր: Եվ այդպես հենց առաջին փորձը, բարեբախտաբար, հաջող անցավ»:

Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը», «Քաջ Նազարը», «Սուտլիկ Որսկանը», «Անբան Հուռին», «Մի կաթիլ Մեղրը», «Բարեկենդանը» և «Մկների ժողովը» բեմականացումներով հանդես եկան Փոքրիկ Իշխան կրթահամալիրի սաները, գեղարվեստական ղեկավարն էր Մարգարիտա Շահվալադյանը: Ներկա էր նաև կրթահամալիրի տնօրեն Մարիա Խախանյանը:

Հայաստանի ազգային գրադրանի թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում, որտեղ հաճախակի կազմակերպվում են գրականության ցուցադրություններ, փետրվարի 19-ից գործում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գրականության ցուցադրություն:

